



## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ. ԵՎՐՈՊԱՅԻ ԱՊԱԳԱՅԻ ՀՉՈՐ ԽԹԱՆԸ<sup>1</sup>

Եվրոպայի օրվա այս հիշարժան օրը, երբ մենք նշում ենք Շումանի հռչակագրի 70-ամյակը և եվրոպական ինտեգրացիայի գործընթացի սկիզբը;

Մի ժամանակահատվածում, երբ Եվրոպան և ողջ մոլորակը պայքարում են COVID-19 վարակի հարուցած աննախադեպ ճգնաժամը հաղթահարելու համար և երբ մենք պարտավոր ենք մշակել արդյունավետ ռազմավարություններ, որպեսզի վերագործարկենք և վերակառուցենք մեր հասարակությունները և տնտեսությունները;

Հաշվի առնելով, որ մշակույթի և մշակութային ժառանգության լայնածավալ աշխարհը մեծապես և հատկապես տուժել է համավարակից՝ թողնելով լրջագույն մշակութային, սոցիալական և տնտեսական հետևանքներ մշակութային ժառանգությամբ զբաղվող մասնագետների և կամավորների համար;

Տպավորված լինելով մշակույթի և ժառանգության ոլորտի գործիչների՝ մշակութային բովանդակությամբ բացառիկորեն հարուստ նյութերը հասանելի դարձնելու միջոցով, մարդկանց ոգին բարձրացնելու առանձնահատուկ ջանքերով:

---

<sup>1</sup>Այս ԵՎՐՈՊԱՅԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ, ՀՐՈՎԱՐՏԱԿԸ արձակվել է Եվրոպական ժառանգության դաշինքի անդամների կողմից՝ ոչ պաշտոնական հարթակի, որը միավորում է լայն ժառանգության բնագավառում գործող 50 եվրոպական և միջազգային ցանցեր: Եվրոպական ժառանգության դաշինքի անդամները ներկայացնում են շատ մեծ կազմ՝ բաղկացած տասը միլիոն Եվրոպայի քաղաքացիներից: 2011 թվականի հունիսի 11-ին՝ իր հիմնադրումից սկսած, Դաշինքի համակարգումը ապահովում է Եվրոպա Նոստրան:

Մենք՝ ողջ Եվրոպայում ակտիվ գործունեություն ծավալող լայն ժառանգության ոլորտի համայնքի ներկայացուցիչները, հավաքվել ենք Եվրոպայի ժառանգության դաշինքի դրոշի ներքո, որպեսզի փոխանցենք զորակցության, հույսի և Եվրոպայի առաջնորդների և քաղաքացիների միասնականության հզոր ուղերձը: Մենք պատրաստ ենք մեր ներդրումը կատարել Եվրոպայի շուտափույթ սոցիալական և տնտեսական վերականգնման, ինչպես նաև Եվրոպական նախագծի հեռավար առաջընթացի համար:

Ոգեշնչված լինելով 70 տարի առաջ Ռոբերտ Շումանի և իր ժամանակակիցների ունեցած տեսլականով և համարձակությամբ՝ հաստատական ենք, որ մենք պետք է օգտագործենք ներկայիս ճգնաժամը մշակույթը և մշակութային ժառանգությունը վերադարձնելու համար այնտեղ, որտեղին այն պատկանում է՝ Եվրոպայի վերածննդի ամենահիմքին:

Ինչպես ցույց տվեց Եվրոպական մշակութային ժառանգության տարին 2018 թվականին, կան բազմաթիվ միջոցներ, որոնցում մշակութային ժառանգությունը կարող է հանդես գալ որպես դրական փոփոխությունների համար խթան:

Այս հրովարտակում մենք առանձնացնում ենք յոթը միմյանց հետ փոխկապակցված միջոցներ, որոնցում այդ խթանիչը առկա է:

## **1) ԱՌՈՂՋԱՑՆԵԼ ԵՎՐՈՊԱՆ**

Առողջապահական արտակարգ իրավիճակների ժամանակ մշակութային ժառանգությունը ունի և շարունակելու է ունենալ էական դերակատարում յուրաքանչյուր անհատի և, ընդհանուր առմամբ, մեր հասարակությունների ֆիզիկական և մտավոր բարօրության համար: Ինչպես փաստարկված է հարուստ գրականությամբ և մեծապես ճանաչված հանրային որոշումների կայացման մեջ՝ բարօրությունը ամբողջական հասկացություն է, որը ներառում է զգայական, սոցիալական, մշակութային, հոգևոր և տնտեսական կարիքները, որոնք թույլ են տալիս անհատներին իրագործել իրենց ողջ ներուժը և հասարակության մեջ ներգրավված լինել իրենց ողջ կարողությամբ: Հետևաբար, ներդրում կատարել մշակութային ժառանգության մեջ նշանակում է ներդրում կատարել հանրային առողջության, բարօրության մեջ և բարելավել մարդկանց կյանքի որակը:

## **2) ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԻՆԵԼ**

Մի ժամանակահատվածում, երբ ամբողջ աշխարհը առերեսվել է մեր ապրելակերպի խորը փոխակերպմանը, մեր ընդհանուր մշակութային ժառանգությունը և արժեքները ձևավորում են այդքան անհրաժեշտ խարիսխը և կողմնացույցը: Դրանք կարող են, իհարկե, հաղորդել ուղղության զգացողություն և ներշնչանք՝ մեր առջև կանգնած ընտրությունը ճիշտ կատարելու համար: Մշակութային ժառանգությունը ապահովում է կապը մեր արմատների, ինքնությունների ու ավանդույթների, և առավել լայն եվրոպական և համաշխարհային համայնապատկերի միջև: Մասնակցությունը և ներգրավվածությունը մշակութային ժառանգությանը նաև թույլ են տալիս ընդունել մեր զանազանությունը և օգտագործել այն՝ որպես հարստացման և ստեղծարարության աղբյուր: Ինչպես են Եվրոպայի քաղաքացիները զգում և հասկանում իրենց ընդհանուր ժառանգությունը և ինչպես է ժառանգության մեկնաբանման այդ գործընթացը նյութացվում շատ կարևոր է Եվրոպայի ապագայի համար: Ահա թե ինչու առավել մեծ ներդրում կատարելը մշակույթի, կրթության, գիտության և նորարարության ոլորտներում պետք է լինի եվրոպական կենսակերպի առաջխաղացման ամենահիմքում՝ իր ողջ զանազանությամբ: Սա է պատճառը նաև, թե ինչու ապագայում «Համընդհանուր արժեքների եվրոպական միությունը» պետք է լինի նույնքան կարևոր, որքան Եվրոպայի տնտեսական, դրամավարկային կամ քաղաքական միությունները:

## **3) ԹՎԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՓՈԽԱԿԵՐՊԵԼ ԵՎՐՈՊԱՆ**

COVID-19 վարակի պոռթկումը շեշտեց մշակութային ժառանգության թվային հասանելիության առանձնահատուկ կարևորությունը: Մի ժամանակահատվածում, երբ մարդիկ փնտրում են միմյանց ավելի մոտ մնալու ձևեր՝ մնալով ֆիզիկապես իրարից հեռու, ողջ Եվրոպայում գործող մշակութային ժառանգության ոլորտի կազմակերպությունները ընդունեցին այս մարտահրավերը: Եվրոպան արդեն առաջատար դեր է խաղում թվային մշակութային ժառանգության ոլորտում և ունի առաջընթացի ներուժ նոր տեխնոլոգիաներով, ինչպիսիք են արհեստական բանականությունը և մեքենայական ուսուցումը՝ հիմնված մարդասիրական և բարոյական սկզբունքների վրա: Այժմ մենք պետք է միասին աշխատենք այս թվային փոխակերպումը արագացնելու և ավելի զարգացնելու համար: Միևնույն ժամանակ մենք պետք է կրճատենք բաժանումը այն ինստիտուտների միջև, որոնք ունեն թվային տեխնիկայի սարքավորվածություն և նրանց, որոնք՝ չունեն: Մեզ

հարկավոր է ժողովրդավարացնել մեր ժառանգության հասանելիությունը, որպեսզի աջակցենք զանազանությանը, ներառականությանը, ստեղծարարությանը և քննադատական ներգրավածությանը կրթության և գիտելիքի փոխանակության մեջ: Մեզ հարկավոր է աջակցել համագործակցություններին և փորձարկումներին, որոնք ուժեղացնում են նորարարություն կատարելու մեր կարողությունը: Եվ մեզ հարկավոր է խրախուսել թվային տեխնոլոգիաների և թվային գիտելիքի օգտագործումը, հզորացնել մեր մշակութային ինստիտուտների դերը եվրոպական պատմությունները պատմելու գործում:

#### **4) ԿԱՆԱԶՉՊԱՏԵԼ ԵՎՐՈՊԱՆ**

Մինչ Եվրոպական միությունը աշխատում է իր պատմական «Եվրոպայի «կանաչ գործարքի»» վրա, մենք պետք է ապահովենք, որ մեր հասարակության ու տնտեսության «կանաչ փոխակերպման» մշակութային ասպեկտը ամբողջովին հաշվի առնվի: Մեր մշակութային ժառանգությունը, այդ թվում մշակութային լանդշաֆտները, լրջորեն վտանգված են կլիմայական փոփոխություններով: Բայց մշակութային աշխարհը՝ իր ավանդական գիտելիքի և հմտությունների հարստությամբ, կարող է նաև օգտագործվել հետևանքների մեղմացման և հարմարեցման պրակտիկաների ուղղությամբ կատարվող աշխատանքներում, որը կարող է օգնել «Եվրոպայի «կանաչ գործարքի»» հավակնոտ նպատակներին հասնելուն: Մենք հաստատապես աջակցում ենք համավարակից հետո Եվրոպայի «կանաչ վերականգնման» կոչերին և վստահ ենք դրան հասնելու համար մշակութային ժառանգության հսկայական ներուժի մեջ:

#### **5) ՎԵՐԱԾՆԵԼ ԵՎՐՈՊԱՆ**

Արդեն ուղենիշային դարձած «Cultural Heritage Counts for Europe/ Մշակութային ժառանգությունը հաշվի է առնվում Եվրոպայի համար» ուսումնասիրությունը տրամադրում է վստահելի ապացույց քաղաքների և տարածաշրջանների վերածնման համար ժառանգության մեջ ներդրում կատարելու հստակ առավելությունների մասին և՛ անհատի, և՛ համայնքի մակարդակով: Հաշվի առնելով աշխատատեղերի կտրուկ կորստի հեռանկարը՝ մենք կոչ ենք անում Եվրոմիության առաջնորդներին ներդրում կատարել քաղաքային և գյուղական տարածքների ժառանգության վրա հիմնված վերածնման վրա՝ հնարավորություն ընձեռնելով և ուժեղացնելով Եվրոպայի սոցիալական և տնտեսական վերականգնումը: Այսպես Եվրոպան ոչ միայն կպահպանի բազմաթիվ գոյություն ունեցող աշխատատեղերը և դրա հետ առնչվող հմտությունները, այլ նաև կստեղծի նոր

նպաստավոր աշխատատեղեր, սկսած մասնագիտացված արհեստագործությունից մինչև թվային և այլ նոր տեխնոլոգիաների հնարամիտ կիրառումը: Նման «Նոր գործարքը մշակութային ժառանգության համար» իր հերթին շարժիչ ուժ կհանդիսանա սոցիալական և տնտեսական նորարարության համար և կնպաստի մեր բնակելի միջավայրի հսկայական բարելավմանը: Ողջ Եվրոպայի պատմական քաղաքների, գյուղերի և քաղաքամերձ վայրերի ժառանգության վրա հիմնված վերածննդն հսկայական ներուժը կարող է, անշուշտ, բերել խաղի կանոնների իրական փոփոխության առավել կանաչ և ավելի կայուն զարգացող Եվրոպայի ճանապարհին:

## **6) ԶԳԱԼ ԵՎՐՈՊԱՆ**

Առերեսվելով զբոսաշրջության ոլորտի վրա համավարակի աղետային ազդեցությանը ճամփորդելու և տեղաշարժման սահմանափակումների պատճառով, ինչը վտանգի է ենթարկում 13 միլիոն աշխատատեղ, մենք լիովին աջակցում ենք «Եվրոմիության զբոսաշրջության փրկման մեծածավալ ծրագիր» մշակելու դիմումին: Այս ծրագիրը պետք է ներառի հատուկ միջոցառումներ մշակութային զբոսաշրջության վերածննդի համար՝ ամենարժեքային և արագ զարգացող զբոսաշրջային սեգմենտներից մեկի, որը կազմում է Եվրոպայի ամբողջ զբոսաշրջության 40 տոկոսը: Զբոսաշրջությունը մշակութային ժառանգության կարիքն ունի և մշակութային ժառանգությունը՝ զբոսաշրջության: Սակայն մենք վերականգնվում ենք այս ճգնաժամից՝ օգտագործելով այն՝ որպես հնարավորություն, զբոսաշրջության ավելի նորարարական և կայուն զարգացող ձևերի առաջխաղացման համար: Այդպիսով, մենք կապահովենք տևական առավելություններ ժառանգություն հանդիսացող տեսարժան վայրերի հանրային և անհատ սեփականատերերի և դրանք շրջապատող համայնքների համար՝ առաջացնելով որակյալ փորձառություն ունենալու հնարավորություն և ավելի մեծ բավականություն այցելուների համար:

## **7) ԸՆԴՈՒՆԵԼ ԱՇԽԱՏՈՒՄ**

Վերջապես, ինչպես ներկայիս ճգնաժամը ցույց տվեց, հստակ փոխկապակցվածությունը և մարդկության փխրունությունը եզակի հնարավորություն է տալիս Եվրոպային ուժեղացնել իր դրական և կառուցողական դերը աշխարհում: Մշակույթը և մշակութային ժառանգությունը կարևոր խթանիչներն են հարգանքի, միմյանց հասկանալու և վստահության մեծացման համար՝ որպես համաշխարհային զորակացության և

համագործակցության նախապայմաններ: Եվրոպան պետք է այդպիսով օգտագործի իր հարուստ մշակութային պաշարները այս գործընթացը պաշտպանելու համար:

Վերոնշյալ լույսի ներքո, մենք կարիք ունենք՝ համավարակի ավարտից հետո, շտապ և համախմբած կերպով կենտրոնացնել մշակույթի և մշակութային ժառանգության փոխակերպիչ ուժը Եվրոպայի կանաչ և ներառական վերականգնմանը իմաստ և ներշնչանք հաղորդելու համար: ՄԻԱՍԻՆ մենք կարող ենք ուղել իրենց ամբողջ ներուժը Մեր Եվրոպայի ավելի լավ ապագայի համար:

**Այս հրովարտակը արձակվել է 2020 թվականի մայիսի 9-ին Եվրոպական  
ժառանգության դաշինքի անդամների կողմից:**

**ՀԱՎԵԼՎԱԾ**

Հավելյալ ընթերցանության համար, որակական և քանակական տվյալներ,  
ռազմավարական փաստաթղթեր

**1) ԱՌՈՂՋԱՑՆԵԼ ԵՎՐՈՊԱՆ**

Ուսումնասիրություն, հրատարակություններ, հոդվածներ  
Ռազմավարական փաստաթղթեր

**2) ԵՎՐՈՊԱ ԼԻՆԵԼ**

Ուսումնասիրություն, հրատարակություններ, հոդվածներ  
Ռազմավարական փաստաթղթեր

**3) ԹՎԱՅԻՆ ԱՌՈՒՄՈՎ ՓՈԽԱԿԵՐՊԵԼ ԵՎՐՈՊԱՆ**

Ուսումնասիրություն, հրատարակություններ, հոդվածներ  
Ռազմավարական փաստաթղթեր

**4) ԿԱՆԱՊԱՏԵԼ ԵՎՐՈՊԱՆ**

Ուսումնասիրություն, հրատարակություններ, հոդվածներ  
Ռազմավարական փաստաթղթեր

**5) ՎԵՐԱԾՆԵԼ ԵՎՐՈՊԱՆ**

Ուսումնասիրություն, հրատարակություններ, հոդվածներ  
Ռազմավարական փաստաթղթեր

**6) ՉԳԱԼ ԵՎՐՈՊԱՆ**

Ուսումնասիրություն, հրատարակություններ, հոդվածներ

Ռազմավարական փաստաթղթեր

7) ԸՆԴՈՒՆԵԼ ԱՇԽԱՐՀԸ

Ուսումնասիրություն, հրատարակություններ, հոդվածներ

Ռազմավարական փաստաթղթեր